Ս. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում (4—9-րդ դդ.), ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1976, 406 էջ։

Գրախոսվող մենագրության մեջ լրիվ և ամբողջական գծերով բացահայտվում են հայ ամուսնա-ընտանեկան իրավունքի էությունն ու պատմական կոչումը, նրա ինստիտուտների բովանդակությունն ու ներքին բնույթը պատմական այն ժամանակներում, երբ նոր էին կազմավորվում ու զարգանում հայ կանոնական ու աշխարհիկ օրենսդրությունները։ Հիմք ու ելակետ ընդունելով մատերիալիստական դիալեկտիկական մեթոդը, Ս. Հովհաննիսյանը ցույց է տվել, որ հայ հողի վրա էլ ընտանիքն ու նրա ձևերը, ընտանեկան իրավունքն ու նրա ինստիտուտները իրենց գոյությամբ միշտ էլ պայմանավորված են եղել այն տնտեսական, հասարակական-քաղաքական ու դասակարգային գործոններով, որոնց հիմքի վրա դրանք առաջացել ու որոնց ուժով պայմանավորել են իրենց սեփական գոյությունը։ Այս դիրքերից էլ Ս. Հովհաննիսյանը համակողմանի կերպով և խորությամբ ուսումնասիրել է վաղ ֆեոդալական Հայաստանի ամուսնա-ընտանեկան իրավունքն իր ամբողջության մեջ, հետազոտել աշխարհիկ-կանոնական օրենսդրության հիմքի վրա ստեղծված այդ իրավունքը և հետամուտ եղել դրա զարգացմանն ուսումնասիրվող տևական պատմաշրջանի՝ IV—IX դդ. ընթացքում։

Մենագրության արժեքը նաև նրանում է, որ այն շարադրելիս հեղինակը կիրառել է պատմահամեմատական մեթոդը։ Նա հայ իրավունքի այդ ճյուղի ինստիտուտներն ու հասկացությունները քննում է ոչ թե ազգայնորեն կղզիացված վիճակում, այլ դրանք համեմատելով պատմական այդ ժամանակաշրջանում Հայաստանի հարևան երկրների՝ Պարսկաստանի, Հռոմի, Ասորիքի, Բյուզանդիայի, Վրաստանի և մովսիսական ու թալմուդական ամուսնա-ընտանեկան իրավունքի համապատասխան ինստիտուտների ու հասկացությունների հետ։ Մենագրության մեջ քննադատվում են օտարազգի և հայ այն գիտնականները, ովքեր իրենց աշխատություններում տասնամյակների ընթացքում հակագիտական դատողություններ են արել հայ իրավունքի, այդ թվում հայ ամուսնա-ընտանեկան իրավունքի մասին, փորձելով ժխտել դրանց ինքնուրույնությունն ու հայկական լինելը և անգամ պնդել, որ հայերը, իբր թե սեփական օրենսդրություն և իրավունք չեն ունեցել ու նրանց մոտ միշտ էլ գործել են օտար օրենքներ։

Գրախոսվող մենագրությունը բաղկացած է առաջաբանից և 9 ընդարձակ գլուխներից։ Առաջաբանի մեջ հեղինակը գիտականորեն հիմնավորում է թեմայի արդիականությունը և գնահատում խնդրո առարկա պրոբլեմի հետազոտության ուղղությամբ այնպիսի երևելի գիտնականների վաստակը, ինչպիսիք են Վ. Բաստամյանցը, Խ. Սամվելյանը, Հ. Մեղավորյանը, Ն. Մելիք-Թանդյանը, Ա. Ղլճյանը և ուրիշներ։ Այդտեղ մատնանշվում են նաև այն հիմնական իրավական աղբյուրները, որոնց վրա կառուցված է մենագրությունը «Հայոց կանոնագիրք»-ը, «Ասորա-հռոմեական դատաստանագիրք»-ը և այլն։

Մենագրության առաջին գլխում հեղինակը քննում է հայ ամուսնա-ընտանեկան իրավունքի նյութական և իրավական, այդ թվում իրավահայտ աղբյուրները, տալով դրանց բնութագիրն ու գիտական նշանակությունը։ Իրավացիորեն ընդգծելով, որ այդ իրավունքի հիմնական ու ելակետային աղբյուրը դասակարգային հասարակության, տվյալ դեպքում հայ վաղ ֆեոդալական հասարակության նյութական պայմաններն են, հեղինակն այնուհետև անցնում է իրավական ու իրավահայտ աղբյուրների բնութագրմանն ու արժեքավորմանը։

Երկրորդ գլուխը նվիրված է վաղ ֆեոդալական Հայաստանում աշխարհիկ-կանոնական ընտանեկան իրավունքի ծագման ու ձևավորման պրոբլեմին։ Հեղինակը հետազոտում է ոչ միայն իրավական այդ նոր վերնաշենքի՝ ընտանեկան իրավունքի, ձևավորման պրոցեսը, դրա զարգացման պատմական պայմանները, կազմավորումը, այլև ուսումնասիրվող դարաշրջանի իրա-

վունքի, հատկապես ընտանեկան իրավունքի, հիմնական սկզբունքները։ Հեղինակը կոնկրետ փաստերով ապացուցում է, որ սկսած IV դ. հայ հողի վրա ընտանեկան հարաբերությունները նորմավորվում և կարգավորվում են աշխարհիկ և կանոնական իրավունքով։

Աշխատության հաջորդ գլուխը նվիրված է հայ ընտանիքի ձևերին, կազմին ու ֆունկցիաներին։ Ղեկավարվելով մարքս-լենինյան տեսությամբ և ելակետ ընդունելով Ֆ. Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» հանճարեղ աշխատության գիտական սկզբունքները, հեղինակը բացահայտում է ընտանիքի ու Հայաստանում դրա հոմանիշ «երդ», «տուն», «ծուխ» ըմբռնումների էությունը։ Վերլուծելով իր հավաքած փաստական և իրավական հսկայական նյութը, հայ և օտար պատմիչների՝ Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Ագաթանգեղոսի, Հովհան Մամիկոնյանի, Ստեփանոս Օրբելյանի, Ջենոբ Գլակի և ուրիշների ուղղակի և անուղղակի հաղորդումները, նա համոզիչ կերպով ցույց է տալիս, որ վաղ ֆեոդալական Հայաստանում ընտանիքի տիրապետող ձևը հանդիսացել է մենամուսնության վրա հիմնված այսպես կոչված փոքր անհատական ընտանիքը, որի կազմի մեջ մտել են հիմնականում ծնողները ու զավակները, և որ այդ ընտանիքը եղել է հասարակության յուրաքանչյուր բջիջ՝ հիմնված հասարակական-տնտեսական գործոնի վրա։

Մենագրության չորրորդ գլխում հեղինակը հետազոտում է նշանադրության ինստիտուտն իր պատմական զարգացման մեջ։ Մատնանշելով նշանադրության անմիջական նպատակները, նա ցույց է տալիս, որ պատմական Հայաստանում դա տարածված, և որ կարևորն է, օրինականացված յուրօրինակ սոցիալական երևույթ էր։ Այն կողմերի միջև որոշակի իրավունքներ ու պարտականություններ էր առաջացնում և այդ պատճառով էլ հանգամանորեն կարգավորվում էր ինչպես աշխարհիկ, այնպես էլ, մանավանդ, կանոնական օրենքներով։

Առանձնապես բովանդակալից և ծավալուն է աշխատության հինգերորդ գլուխը, որը նվիրված է ամուսնության, այսինքն պսակի կամ պսակադրության ինստիտուտին վաղ ֆեոդալական Հայաստանում։ Այստեղ ամենից առաջ լուսաբանվում է այն հարցը, թե քրիստոնեության հաղթանակով ինչ փոփոխություններ կատարվեցին ամուսնա-ընտանեկան իրավունքի ու հարաբերությունների բնագավառում։ Հեղինակը հետևողականորեն հետազոտում է ամուսնության հասկացությունը և դրա զարգացումը, պսակադրության ծագումը, զարգացումը և իրավական կարգավորումը, պսակի եկեղեցական կարգը, այդ կարգը խախտողների նկատմամբ ձեռնարկված իրավական, այդ թվում քրեական-իրավական միջոցները, բնութագրում է հոգևոր պաշտոնատար անձանց իրավունքներն ու պարտականությունները՝ պսակադրությունն իրականացնելիս։ Ս. Հովհաննիսյանը, իբրև դիտական ընդհանրացում, մատնանշում է, որ վաղ ֆեոդալական Հայաստանում ամուսնության իրավական հիմքը եկեղեցական համապատասխան ամուսնական ծիսակատարումն է Աստվածաշնչի և հայոց ծիսարան «Մաշտոց»-ի պահանջների պարտադիր պահպանմամբ։

Մենագրության վեցերորդ գլուխը վերաբերում է ամուսնության դադարման ինստիտուտին։ Այդ գլխում լուսաբանվում են այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են ամուսնության դադարումը և դրա գործնական ու իրավաբանական նախադրյալները։

Ընտանիքի կայունավորմամբ չափազանց կարևոր նշանակություն են ստանում ամուսինների անձնական և գույքային (ինչքային) հարաբերությունները, ամուսինների՝ միմյանց նկատմամբ ունեցած իրավունքներն ու փոխադարձ պարտականությունները։ Մենագրության մեջ այդ հարցերին առանձին բաժին է նվիրված՝ 7-րդ գլուխը։ Իսկ աշխատության հաջորդ՝ ութերորդ, գլուխը նվիրված է ծնողների և զավակների անձնական ու գույքային (ինչքային) իրավահարաբերությունների լուսաբանմանը։

Մենագրության վերջին գլխում քննվում են ամուսինների մերձավոր, արյունակից ազգականների միջև առաջացող իրավահարաբերությունները։ Այստեղ լուսաբանվում են նաև խնամակալության ու հոգաբարձության ինստիտուտները, որոնց մասին բովանդակալից առանձին իրավանորմեր կան հայ աշխարհիկ ու կանոնական օրենքներում և բազում հաղորդումներ՝ հայ պատմիչների մոտ։

Այսպիսով, ամբողջությամբ առած Ս. Հովհաննիսյանի մենագրությունը հայ իրավունքի պատմությանն ու տեսությանը նվիրված մնայուն գործ է, գիտական կարևոր ներդրում հայ իրավունքի պատմության ուսումնասիրման բնագավառում։

Աշխատության մեջ տեղ են գտել առանձին թերություններ ու անճշտություններ։ Հեղինակի դատողություններում որոշ շփոթ կա իրավունքի «իրավական» և «իրավահայտ» աղբյուրների էության մասին։ Իրավական են կոչվում այն աղբյուրները, որոնք պատմականորեն գործող օրենքներ են եղել, օրինակ, մեր «Կանոնագիրք»-ը, Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի

դատաստանագրքերը. «Ասորա-հռոմեական դատաստանագիրք»-ը և այլն։ Իրավահայտ աղբյուրներն այն նյութերն են, որոնք օրենքներ չեն. բայց որոնցով այս կամ այն չափով ճանաչվում ու ընկալվում է երբևէ գործող օրենքների ու իրավունքի էությունը։ Իրավահայտ աղբյուրներ են, օրինակ, հայ պատմիչների գործերը, ազգագրական նյութերը, վիմագիր արձանագրությունները, հայրենները, մեր ազգային էպոսը. առանձին դեպքերում՝ ժողովրդական հեքիաթները և այլն։ Մինչդեռ հեղինակը իրավահայտ աղբյուր է համարում «Հայոց կանոնագիրք»-ն ու նույնիսկ Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»-ը (էջ 342)։

Քննադատելի է այն, որ աշխատության առաջին գլխում քննության են առնվում իրար հետ առանձին առնչություն չունեցող երկու տարբեր հարցեր. ա) աղբյուրների և ընդհանուր գրականության տեսություն, և բ) ընտանեկան իրավունքը ստրկատիրական Հայաստանում, հարցերը։ Դրանք հարցեր են, որ պետք է քննվեին ու ավելի մանրամասն լուսաբանվեին առանձին. ավելի ճիշտ՝ տարբեր գլուխներում, քանի որ դրանց ուսումնասիրության առարկաներն ու բնագավառները միանգամայն տարբեր են։

Անընդունելի է հեղինակի այն պնդումը. թե իբր մայրենիքը սեփականության ինքնուրույն ձև է։ Հայկական տնտեսական կատեգորիաների և իրավունքի ուսումնասիրությամբ զբաղված այնպիսի ճանաչված հեղինակություններ, ինչպիսիք են Ն. Ադոնցը, Լ. Մելիքսեթ-Բեկը, Խ. Սամվելյանը, Ա. Սուքիասյանը, Թ. Ավդալբեգյանը, Վ. Ռշտունին, Ն. Թովմասյանը և ուրիշները սեփականության նման ձև չեն ընդունում. դա ոչ այլ ինչ է, եթե ոչ սեփականություն ձեռք բերելու եղանակներից մեկը, յուրատեսակ պարգևականք, ինչպես այդ մասին հիշատակում են հայ պատմիչները և հայկական օրենսդրական-իրավաբանական հուշարձանները։

Մենագրության մեջ հաճախ է խոսվում «օրենսդրի» մասին, որի ջանքերով ժամանակի ընթացքում իբր ընդունվել են համապարփակ օրենսդրական ակտերը, օրինակ. «Կանոնագիրք»-ը, դատաստանագրքերը և այլն։ Գործի համար խիստ շահեկան կլիներ, եթե հեղինակն իր խոսքն ասեր այն մասին, թե հայոց պատմության մեջ, առանձնապես կենտրոնական պետականության կորստի ժամանակաշրջանում, եղե՞լ են արդյոք օրենսդիր օրգաններ և եթե այո, կոնկրետ ինչում է արտահայտվել նրանց պրակտիկ գործունեությունը։ Պետք է պատասխան տրվեր նաև այն հարցին, թե անհատ գործիչները, օրինակ. Օձնեցին, Գոշը, Սմբատ Սպարապետը կամ եկեղեցական-կրոնական կազմակերպությունները պատմության ընթացքում կատարե՞լ են արդյոք օրենսդիր օրգանների դեր։ Այս կարևոր հարցը, դժբախտաբար, մնացել է անպատասխան։

Գրքում տեղ են գտել նաև երկրորդական կարգի թերություններ ու անճշտություններ. օրինակ, 57-րդ էջում խոսվում է այն մասին, որ իբր Կարստն ունի „Grundriss der Geschichte des armenischen Rechtss" երկհատոր աշխատություն՝ հրատարակված Շտուտգարդում՝ 1906 և 1907 թթ.։ Իրականում նման երկհատորյակ գոյություն չունի։ Կարստի երկհատոր մենագրությունը կոչվում է „Sempatscher kodex aus dem XIII Jahrhundert", և հրատարակվել է Ստրասբուրգում՝ 1905 թ.։ Ինչ վերաբերում է „Grundriss"-ին, ապա դա նույն Կարստի գրչին պատկանող ըստ էության ժուռնալային ընդարձակ հոդված է, որը թարգմանված է հայերեն և մասամբ տպագրված է «Բազմավեպ»-ի 1907 և 1908 թթ. համարներում։ Աշխատության 234 էջում հեղինակը գործածում է «...դատաստանագրքի... հոդվածները ոտնահարողները ենթարկվում էին... պատասխանատվության» անհայտ արտահայտությունը։ 384-րդ էջում «Բուլանխ» բառի փոխարեն պետք է լինի «Բուլանուխ» կամ «Բլանուխ», այսինքն Արևմտյան Հայաստանի գավառներից մեկի ճիշտ անվանումը։

Քննադատելի է այն, որ մենագրությունն անձնանունների և տեղանունների ցանկեր չունի, էլ չենք խոսում ռուսերեն և օտար լեզուներով ամփոփումների բացակայության մասին, որոնք կօգնեին ավելի դյուրին յուրացնելու նյութը և բացի այդ ընթերցողների ավելի լայն շրջան կնվաճվեր։

Մատնանշված թերությունները, սակայն, առանձին որակ չեն տալիս և չեն կարող նսեմացնել սեղանի վրա դրված մենագրության բարձր արժանիքները։

ԱՐՇԱԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ
Իրավաբանական գիտությունների դոկտոր